№ 220 Նոյեմբերի 25 (Դեկտեմբերի 7) 1881 Նոյեմբերի 25 (Դեկտեմբերի 7) № 220

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ. կէս տարվանը 6 ռուբլ։
Ուանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ „ՄՇԱԿ"

ԱՄԵՆՕՐԵԱՑ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ **1882** ԹԻՒՆ

(ՏԱՍՆ ԵՒ ՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամմայով.

ՊՐՈԳՐԱՄ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելիետոն կամ Բանասիրական, VIII. Յայտարարութիւններ.

ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԱԳԻՆԸ. 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռ., իւրաքանչիւր ամսին 1 ռուբլ. Հատով համարները 5 կոպէկ.

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բագուից. Նամակ Խմբագրին. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսիա և Գերմանիա. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Նոյեմբերի 11-ին

Կարդալով «Մշակի» 195 համարում պ. Արմենակի Թավրիզից իմ վերաբերութեամբ գրած Նամակը, կամենում եմ այդ Նամակին երկու խօսքով պատասխանելու. Առաջին՝ եւ առաջարկել էի, որ լաւ կը լինէր պարսկահայերում ունենալ մի հայ լրագիր, թող այդ լինէր շաբաթը մի փոքրիկ թերթ. Պ. Արմենակը առաջ է բերում որ Թավրիզում մի 20 հոգի չը կայ լրագիր կարդացող. Բայց լրագիրը մի փոքրիկ քաղաքի համար միայն չի լինի. եթէ «Մշակը» Թիֆլիսում շատ բաժանորդներ չունի, մթթէ ուրիշ քաղաքներում հարիւրաւորներ չը կան. Պարսկաստանի հայոց փոքրիկ լրագիրը կարող է հետևեալ օգուտները ունենալ. 1) Պարսկաստանի կորած հայերին, որոնք փոքր առ փոքր անհետանում են, կը ծանօթացնէ մեզ ռուսահայերիս, և կը պահպանէ նրանց մէջ ազգային գաղափարը և մայրենի լեզուի գործածութիւնը. 2) Պարսկաստանում քիչ շատ ուսում ստացած երիտասարդները, որոնք թէև ուզում են գրականութեամբ պարապել, բայց այնքան բիւրակ չունեն, որ դիմեն իրենց Նամակներով «Մշակին», կը սկսեն փոքր առ փոքր թղթակցել տեղական լրագրի մէջ և զարգանալ ու մաքեր զարգացնել. 3) Որովհետև պետութեան մէջ մի երկու հատ հաղիւ պարսկերէն լրագիր կայ, հայոց լրագիրը կարող է պարապել և քաղաքական հարցերով. Իսկ ինչ վերաբերում է Նիւթական միջոցի, կարծեմ պարսկահայերում քիչ հարուստներ չը կան. ինչի Մուշեղեանց սրբազանը Սալմաստի պէս գաւառական քաղաքում կարող է մի ուսումնարան հիմնելու համար հազար թումաններ հաւաքել, իսկ մի տպարանի համար օգնութիւն չի՞ լինի. Այստեղ է այժմ մի թեհրանցի հայ, պ. Մարգարեանց, որ վերադառնում է Ռուսաստանից. մի ուսում առած մարդ, գիտէ մի քանի լեզուներ և մաքուր հայերէն. սա այն անձնաւորութիւնն է. որ հիմք դրեց Թէհրանի մէջ առաջին անգամ «Հայկազեան ուսումնարանին» և այժմ նպատակ ունի «Մարդասիրական ընկերութեան» անգործ մնացած տպարանը գնել և տանել Թէհրան, հրատարակելու մի հայ լրագիր. Նա գրաշարութիւնը ինքը գիտէ և այնտեղ կարող է սովորեցնել. Ցանկանում ենք աջողութիւն.

Համառօտելով մեր խօսքերը, կը խնդրէինք խոնարհաբար պ. Արմենակից իր գրուածների մէջ մի քիչ քաղաքավարի էլ լինել.

Աբել Ապրեսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 21 Նոյեմբերի

Կարդալով «Մշակի» 217 համարի մէջ իմ ապնիւ բարեկամ պ. Գրիգոր Նիկողոսեանի գեղեցիկ Նամակը Կ. Գոլսից, Սեբաստիայի Խուռնաւիլ հայ գիւղացոց մէջ կազմված «Լուսաւորչեան» ընկերութեան մասին և ուզարկելով այս Նամակիս հետ 3 ռուբլի,—շատ կը պարտաւորացնէք ինձ, եթէ ձեր կարգադրութեամբ ուղարկէք պ. Նիկողոսեանին այդ փողի արժողութեան չափ տաղանդաւոր Թաֆֆիի գրքերից «Լուսաւորչեան» ընկերութեան նպատակի համար.

Միքայէլ Սաղաթէլեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 22 Նոյեմբերի

Մի երեք տարի սրանից առաջ, մի խնճոյքի ժամանակ Ղզլարի մէջ, դժբաղդաբար պատահում է մի որբ հայ երիտասարդ Աբրահամ Շեխինեանց անունով, որը մի քանի երգ է երգում հաւաքված հարուստների համար. Այս մեր կրեսոսները, որոնք թէև լինում են 15 հոգի և որոնց ձեռքին է քաղաքի առաջադիմութեան գլխը՝ տեսնելով երիտասարդի անել վիճակը և ձայնի աջողութիւնը, մի քարի միտք է ծագում նրանց մէջ, այն է ուղարկել նրան Ներսիսեան դպրանոց, որպէս զի մի օրինաւոր կրթութիւն ստանայ և արժանաւոր քահանայ դառնայ իրանց համար, որովհետև Ղզլարում օրինաւոր քահանաների սով է. Իսկոյն համախոհական թուղթ են կազմում և որոշում են տալ նրան 300 ռուբլ տարեկան. Վերոյիշեալ երիտասարդն էլ յոյսը դնելով աղաների վրա, գալիս է Թիֆլիս, ուր ընդունվում է Ներսիսեան դպրանոցի երրորդ դասատուն և տարուց տարի աջողութեամբ փոխադրվելով յաջորդ դասատուները, հասնում է մինչև հինգերորդը. Երկու տարի վերոյիշեալ աղաները բարեխղճութեամբ կատարում են իրանց պարտքը. ուղարկելով 300 ռուբլ տարեկան վճարը. Եւ այս տարի ևս խոստանում են Շեխինեանին դարձեալ օգնել և խեղճ ուսանողն էլ դրամից բոլորովին զուրկ լինելով այս վերջին ամիսները, բայց յոյս ունենալով, որ պէտք է բարերարներից ստանայ, պարտք է անում պանդոկում իր անհրաժեշտ պիտոյից համար (չը յիշելով դեռ այն կոպիտ և նրա զգայուն սիրտը վիրաւորող յիշոցները, որ նա համբերութեամբ ընդունում է իր քնակարանի տիրոջից, չը կարողանալով վճարել սենեակի վարձը). Եւ ինչ էք կարծում. ինչ է ստանում այսքան նախատանաց փոխարէնը.—մի Նամակ, որտեղ, բարերարները քաջալերում են նրան օգնել. և մինչև անգամ նրանցից մէկը Նամակով յայտնում է, որ «աւելորդ է Նամակներով և հեռագիրներով ինձ անհանգիստ առնել, ես իմ տալիքս տուել եմ». Գրիչս անզօր է նկարագրել այն վայրկեանը, երբ Շեխինեանցը ստանում է Նամակը. Եւ յի՞ բաւի, երևակայեցէք խեղճ ուսանողի դրութիւնը, շրջապատված անծանօթ տարրով և առանց դրամի Թիֆլիսի պէս մի քաղաքում. Այնուհետև պանդոկի և սենեակի տէրերն էլ իմանալով՝ որ այլ ևս Շեխինեանցը անկարող է վճարել պարտքը, երկուսն էլ մերժում են նրան, առաջինը՝ կերակուր և երկրորդը՝ սենեակ տալ. Նրա ընկերները խղճալով իրանց ընկերոջը, ինչպէս և իցէ օգնում են, բայց նրանք ևս հրաժարվում են, որովհետև իրանք էլ աղքատ են. Ամենին յայտնի է Ներսիսեան դպրանոցի սաների վիճակը դրամական կողմանէ. առհասարակ նրանք բոլորն էլ աղքատ են. Եւ այսպիսի անել վիճակի մէջ մնացել է խեղճը քաղցած, միայն մի թլուզով այս ցուրտ ժամանակը, մինչդեռ նրա բարերարները, իրանց խօսքը չը կատարելով, շարունակում են լաւ կեանք վարել, կուշտ ուտել ու խմել և երևի այս բոպէիս կանաչ սեղանի շուրջը նստած, թուղթ խաղալ. Ցեսենք Ներսիսեան դպրանոցի վարչութիւնը ինչ կարգադրութիւն կանի այս պատահարի վերաբերեալ. Այժմ ընթերցողների արդար վճռին եմ յանձնում ղզլարցոց միանգամայն նախատինք բերող այդ ցաւալի իրողութիւնը. Իսկ ինձ մնում է զարմանալ և ցաւել տեսնելով՝ ինչ աստիճան ստոր վիճակի մէջ են Ղզլարի ղեկավարները, որ 15 անձնաւորութիւն և այն էլ առաջին կարգի հարուստներ, չեն կարողանում իրանց խօսքը կատարել մի 300 ռուբլ չնչին գումար վճարելով. Ի՞նչ կը նշանակէ սովեալ մարդուն տալ կերակրի համը տեսնելու և թոյլ չը տալ նրան ուտել, ինչպէս զրկել նրան այն լոյսից, որ գուցէ ապագայում իրանց օգուտ կը տար. Ի՞նչու խափանեցին աղաները Շեխինեանցի տապարէզը, որով իրաւամբ, գուցէ նա իր համար մի ուրիշ ապարէզ ընտրած լինէր, և վերջապէս ինչ ստորութիւն, չը տալ խոստացած միջոցը, երբ երիտասարդին երկու տարի է մնացել աւարտելու. Ահա, այսպիսի հազար ու մի ցաւալի երևոյթներ հայը տեսնելով կամ լսելով, կամ կարդալով՝ պէտք է աշխատի հետևել «Մշակի» գաղափարներին, այն է. հիմնած բարեգործական ընկերութիւնը իր նպատակին հասցնել, որով ուսանողութիւնը կարողանար ազատվել կամայական անձանց ձեռքից և կեանքի զանազան խանգարիչ հանգամանքներից, կարողանար անվրդով աւարտել իր ուսման ընթացքը. Թող հասկանայ մեր հասարակութիւնը, որ «Մշակի» խօսքերը չափած ու կշռած են. Այս երկտողը գրելով կարծում եմ որ մեր աղաների բարկութիւնը շարժած կը լինեմ, բայց ես գրել եմ կատարելով միմիայն ընկերական պարտքս և ես իմ խղճի առաջ արդար եմ.

Ն. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Порядокъ» լրագրին Գանձակից հաղորդում են. Այստեղ սպասում են քաղաքային վարչութեան մացնելուն. Դրա մասին արդէն հարկաւոր առաջարկութիւնները եղել են և, ինչպէս ասում են, շուտով թոյլտուութիւն կը տացվի. Այդպիսով կովկասեան փոխարքայութեան նահանգական մեկ քաղաքը, որ մինչև այժմ ընտանեական կողմից ամբողջապէս պոլիցիայից կախումն ունէր, կը հաւասարվի իր իրաւունքներով ուրիշ այլ քաղաքների հետ, որոնք կառավարվում են ընտրված անձինքներով. Կարծում են, որ Գանձակի քաղաքային դուման եկող տարվայ սկզբին կը բացվի.

—

Ֆինանսների մինիստրութեան մէջ ներկայումս քննվում է Ռուսաստանից նաւթ դուրս տանելը բոլորովին արգելելու խնդիրը այն նպատակով, որ ազատեն այդ թանգագին նիւթը օտարների յափշտակութիւնից.

—

Ռուս լրագիրներում կարդում ենք, որ վերջին ժամանակներում շատերը փողեր են ուղարկում զանազան տեղեր ապահովված և հասարակ նամակների մէջ, որ կարող է պատահել նրանից, որ շատերը չը գիտեն թէ այդ ձևով փողեր ուղարկելը օրէնքներով արգելված է. Այդ բանը աչքի առաջ ունենալով, փոստային կառավարութիւնը յայտնում է, որ փող ուղարկելը կարելի է միայն փողատուր ծրարների մէջ, հակառակ դէպքում փողերը յարքունիս են գրաւվում.

—

Շատ տեղերից մեզ գրում են որ ստացել են ուսումնարանների համար պ. Բաղդասար Սարգսեանից Նուէր Շահազիզեանի «Հրապարակիսս Զայն» գիրքը և շնորհակալութիւն են յայտնում Նուիրողին. Մեզ անհնարին է տպագրել այդ բոլոր շնորհակալութիւնները.

—

«Փուրնալ դ'Օրիան» լրագրին գրվողներից շատերը գարմանում են թէ ինչ է պատճառը, որ գրվելով այդ թերթին, ստանում են միայն նրա 31-որդ համարից և ոչ թէ սկզբից. Պատճառը շատ պարզ է. այդ համարից միայն սկսվեցան թերթի մէջ հայոց խնդրի վրա յօդուածները, ուրեմն այդ համարից միայն խմբագիրը սկսեց տպել իր լրագրի աւելի մեծ թիւ օրինակների, իսկ մինչև հայոց օրգան դառնալը «Փուրնալ դ'Օրիան» շատ սակաւաթիւ օրինակներով էր տպագրվում, ուրեմն № 31-որդի բոլոր համարները սպառված են. Իսկ այն պարոնները, որոնք աւելի ուշ գրվեցին, շատ հաւանական է, որ 31-որդ համարն էլ չեն կարողանայ ստանալ.

—

Լայպցիգում հրատարակվող «Leipziger Zeitung» լրագրում կարդում ենք մի երկար առաջնորդող յօդուած «Ein armenischer Schmerzensschrei» վերնագրով (Հայոց հառաչանք). որի մէջ յօդուածագիրը խօսում է Վիէննայում հրատարակվող «Փուրնալ դ'Օրիանի» մասին և գլխաւորապէս Գրիգոր Արծրունու բրոշիւրի մասին «Թիւրքաց հայերի անտեսական դրութիւն» վերնագրով. Յօդուածը երեք և կէս կօլոնից է բաղկացած և շատ համակրութեամբ է վերաբերվում դէպի Թիւրքաց հայերը. Յօդուածագիրը վերջացնում է իր խօսքերը ասելով թէ այդ տեսակ նշանաւոր ցեղական յատկութիւններ աւանդող մի ազգութիւն, ինչպէս հայերը, որոնք Ասիայի եւրոպացիներն են, պէտք է, ի հարկէ, ժամանակով իրանց վրա ուշադրութիւն դարձնեն թէ Գերմանիայի և թէ ամբողջ Եւրոպայի. Ինչպէս երևում է «Journal d'Orient» թերթը սկսում է մեծ նշանակութիւն ստանալ Եւրոպայում. «Leipziger Zeitung» լրագիրը ասում է թէ մի ազգութեան շտները պաշտպանելու համար ծառայեցնում են մամուլը. առհասարակ, և հայերն էլ այդ միջոցին ձեռնամուխ եղան. «Այդ ուզղու-